**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն**
**Երևանի պետական համալսարանի**
**Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**
**2026 թ. հունիսի 15-ին կայացած թիվ 14 նիստի**

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. հունիսի 15-ի թիվ 14 նիստը անցկացվեց հարցման կարգով: Օրակարգում ներկայացված էր մեկ հարց: Գիտական խորհրդի 32 անդամներից հարցմանը մասնակցել են 25 անդամներ:

**Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանի կենսաինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի ասպիրանտ՝ Աղրինե Կարենի Պարոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերաձևակերպման հարցը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ. Կ.Բ. Նազարյան):**

**ԼՍԵՑԻՆ՝** Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանի կենսաինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի ասպիրանտ՝ Աղրինե Կարենի Պարոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի (Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ. Կ.Բ. Նազարյան) վերաձևակերպման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը: Նշվեց, որ Աղրինե Պարոնյանի ատենախոսական աշխատանքի կատարման ընթացքում մշակվել են նոր մեթոդական մոտեցումներ՝ ստեղծվել և աշխատանքում լայնորեն կիրառվել է Ալֆաֆոլդ համակարգչային ծրագիրը, մշակվել են պոտենցիալ մոդուլյատորների հսկայական շտեմարաններ, որոնք ընկած են սույն հետազոտության հիմքում: Հետևաբար անհրաժեշտություն է առաջացել վերաձևակերպել «Պիրինի և 14-3-3 սպիտակուցի իզոֆորմների փոխազդեցության մոդուլյատորների de novo դիզայն» թեման «Պիրինի և 14-3-3 սպիտակուցի իզոֆորմների փոխազդեցության մոդուլյատորների in silico ուսումնասիրություն» թեմայով, Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** վերաձևակերպել Աղրինե Կարենի Պարոնյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պիրինի և 14-3-3 սպիտակուցի իզոֆորմների փոխազդեցության մոդուլյատորների in silico ուսումնասիրություն», Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ): Նախկին թեմա՝ «Պիրինի և 14-3-3 սպիտակուցի իզոֆորմների փոխազդեցության մոդուլյատորների de novo դիզայն»:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ Ի.Վ. Շահազիզյան